



Ներդրումներ դեպի ապագա

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2025Թ. 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

20 փետրվարի 2026թ.

* Ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա



ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՆԵՐՁ

«2025 թվականը արդյունավետ տարի էր Ակբա բանկի համար. մեր ակտիվները գերազանցեցին 1 տրիլիոն ՀՀ դրամի շեմը: Այս նվաճմամբ Հայաստանի առաջատար 3 բանկերի շարքում Ակբան էլ ավելի ամրապնդեց իր դիրքերը բոլոր հիմնական չափանիշներով: Այս փաստն արտացոլում է Ակբա բանկի մասշտաբը և ինստիտուցիոնալ հասունությունը, որին մենք հասել ենք երեք տասնամյակի դիսկալի աճի միջոցով: Ֆինանսական այս կարևորագույն ձեռքբերումը վկայում է բանկի նկատմամբ մեր շահակիցների վստահության մասին:

2026-ին մենք շարունակելու ենք կենտրոնանալ զարգացող միջավայրում կայուն աճի ապահովման վրա: Բանկի գործունեության ընթացքում մենք հաջողությամբ դարձել ենք առաջատար ֆինանսական կառույց, որի նկատմամբ վստահությունը խարսխված է տարիների ընթացքում ձեռք բերված հեղինակության և երկարաժամկետ մտածողության վրա:

Մենք հավատում ենք, որ մեր աշխատանքի արդյունքները կապված են մեր երկրի առաջընթացի հետ: Մեր նպատակը նույնն է՝ նպաստել Հայաստանի տնտեսության կայուն զարգացմանը:»



ՀԱՎՈՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

■ **ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ**

- 2025թ. 4-րդ եռամսսնայ. ֆինանսական արդյունքներ
- ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ | 2025Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Հուսալի, դիմացկուն և թվային ուղղվածությամբ. նվիրված կայուն աճին և նորարարություններին»

- ▶ Հայաստանի առաջատար **ունիվերսալ բանկերից մեկը**, որի առաքելությունն է իր ինքնատիպ և նորարարական լուծումներով նպաստել հայկական հասարակության կայուն զարգացմանը:
- ▶ Հզոր և դիվերսիֆիկացված **ֆինանսական խումբ՝** կենսաթոշակային ֆոնդերի առաջատար կառավարիչ **Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթի** և լիզինգի շուկայի առաջատար **Ակբա Լիզինգի** հետ միասին:
- ▶ **Ցուցակված Հայաստանի ֆոնդային բորսայում** և դիվերսիֆիկացված բաժնետիրական կառուցվածքով, որն ամրապնդված է ամուր միջազգային ինստիտուցիոնալ գործընկերությամբ և բաժնետոմսերի ակտիվ ազատ շրջանառությամբ:
- ▶ Հանձնառու **կորպորատիվ կառավարման լավագույն չափանիշներին՝** հիմնված խիստ ռիսկերի կառավարման և համապատասխանության գերազանցության վրա:
- ▶ **Լայն և հավատարիմ հաճախորդների բազա՝** թվային հասանելիության և ժամանակակից բանկային փորձի վրա ռազմավարական շեշտադրմամբ:

ՇՈՒՋ
690,000
ԱԿՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

66
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

1,900+
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

ՇՈՒՋ
920,000
ՔԱՐՏԵՐ

41,000+
POS ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐ
270+
ԲԱՆԿՈՄՍՆԵՐ

94.5%
ԹՎԱՅԻՆ
ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿԵՒՐ

FitchRatings
BB- ՎԱՐԿԱՆԻՇ
ԵՐԱՆՐԱՄԱՆԿԵՑ ԿԱՅՈՒՆ ԴԵՆՏԱԿԱՐԿ

Moody's
Ba3 ՎԱՐԿԱՆԻՇ
ԵՐԱՆՐԱՄԱՆԿԵՑ ԿԱՅՈՒՆ ԴԵՆՏԱԿԱՐԿ



«Հավասարակշռված սեփականություն՝ ապահովված ուժեղ ինստիտուցիոնալ կառույցների և հանրային ներկայությամբ»

75%  **acba Federation**

Ակրա Ֆեդերացիա

«Ակրա Ֆեդերացիա» ՓԲԸ-ն Ակրա բանկի նշանակալի բաժնետերերն է 2017 թվականից ի վեր իր 75% բաժնեմասի միջոցով ներկայացնելով ավելի քան 75,000 հալ գյուղատնտեսների: Բաժնետիրական մասնակցությունից զատ, այն ծառայում է որպես զարգացման կատալիզատոր՝ վերաներդնելով արժեքը գյուղատնտեսության, նորարարության և համայնքների կայուն զարգացման մեջ համապատասխանեցնելով այն միջազգային կառավարման և ESG ստանդարտներին:

10%  **PROPARCO GROUPE AFD**

Պրոպարկո

Պրոպարկոն «Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD)» խմբի դուստր ընկերությունն է և AFD-ի կողմից մասնավոր հատվածի ֆինանսավորման թելը: Բանկի բաժնետերեր է 2024թ. դեկտեմբերից: Այն աջակցում է զարգացող շուկաներում կայուն տնտեսական աճին՝ երկարաժամկետ ֆինանսավորման, բաժնետիրական ներդրումների և ESG բարձր չափանիշներին համապատասխանող տեխնիկական աջակցությամբ միջոցով:

15%

Ազատ շրջանառվող մաս

(free float)

Բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը տնօրինվում է շուրջ 5000 բաժնետերերի կողմից, այդ թվում՝ անհատ ներդրողներ, աշխատակիցներ, իրավաբանական անձինք և ներդրումային ընկերություններ, ինչպես նաև անվճարատերեր: Այս դիվերսիֆիկացված բաժնետերերի բազան նպաստում է բաժնետոմսերի իրացվելիությանը, շուկայի տեսանելիությանը և շահառուների լայն ներգրավվածությանը, միաժամանակ՝ ամրապնդելով թափանցիկությունը և կայուն կորպորատիվ կառավարումը:





ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 2025թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Ուժեղ և հավասարակշռված աճ բոլոր հիմնական ոլորտներում, որն ամրապնդում է Ակբայի ամուր դիրքերը Հայաստանի առաջատար բանկերի շարքում»



ԱԿՏԻՎՆԵՐ

1,068 մլրդ ՀՀ դրամ
(\$ 2,814 մլն)

3-րդ խոշորը շուկայում՝ 8.3% մասնաբաժնով



ՎԱՐԿԵՐ (ներառյալ լիզինգը)

736.8 մլրդ ՀՀ դրամ
(\$ 1,942 մլն)

3-րդ խոշորը շուկայում՝ 9.6% մասնաբաժնով



ԿԱՊԻՏԱԼ

194.9 մլրդ ՀՀ դրամ
(\$ 513.8 մլն)

3-րդ խոշորը շուկայում՝ 9% մասնաբաժնով



ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

103 մլրդ ՀՀ դրամ
(\$ 271.6 մլն)

1-ինը ոլորտում



ԱՎԱՆԴՆԵՐ

(ներառյալ պարտատոմսերը)

673.9 մլրդ ՀՀ դրամ
(\$ 1,776 մլն)

3-րդ խոշորը շուկայում՝ 8.6% մասնաբաժնով



ԶՈՒՏ ԾԱՐՈՒՅԹ

36.2 մլրդ ՀՀ դրամ
(\$ 95.5 մլն)

- ▶ Ակբան **գերակատարել** է իր բոլոր հիմնական ցուցանիշների գծով տարեկան պլանները՝ պայմանավորված **բիզնեսի բնական աճով** և հիմնական ուղղություններում **ուժեղ արդյունքներով**:
- ▶ Կայուն աճը վերահաստատում է Ակբայի ամուր դիրքը Հայաստանի առաջատար երեք բանկերի շարքում:
- ▶ **Լիզինգի ոլորտում առաջատարությունը**, ինչպես նաև վարկային ու ավանդային **պորտֆելների շարունակական աճը** վկայում են բանկի կայուն զարգացումը՝ համահունչ ոլորտային միտումներին:
- ▶ **Կապիտալի աճը** համահունչ է բանկային համակարգի միջին աճի մակարդակին՝ ապահովելով կայուն հիմք երկարաժամկետ և ռազմավարական աճի համար:
- ▶ **Բարձր շահութաբերությունը (36.2 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ)** ընդգծում է բանկի ֆինանսական ներուժը, որը գերազանցել է բանկային համակարգի միջին մակարդակը:
- ▶ **Որպես առաջատար եռյակում գտնվող բանկ**, 2025թ. մեր հավասարակշռված արդյունքներն արտացոլում են կայուն աճի նկատմամբ մեր խորը հանձնառությունը՝ ձևավորելու երկարաժամկետ արժեք և դրական ազդեցություն ունենալու Հայաստանի իրական տնտեսության վրա:



**ԱԿՏԻՎՆԵՐԻ
ԸՆՅՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ROA)**
3.6 %



**ԿԱՊԻՏԱԼԻ
ԸՆՅՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ROE)**
20.2%



**ԾԱԽՍԵՐ/
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**
42.2 %



**ԿԱՊԻՏԱԼԻ
ՀԱՄԱՐԺԵՐՈՒԹՅՈՒՆ**
23.2 %



**ԹՎԱՅԻՆ
ԱՄՍԱԿԱՆ ԱԿՏԻՎ
ՕԳՏԱՏԵՐԵՐ**
57%



**1 ԲԱԺՆԵՏՈՄՍԻՆ
ԲԱԺԻՆ ԸՆԿՆՈՂ ԸՆՅՈՒԹՅՈՒՆ**
6,055 ՀՀ դրամ
(\$ 16)

- ▶ **Բարձր շահութաբերություն** - Կապիտալի **20.2%** և ակտիվների **3.6%** շահութաբերության ցուցանիշները ընդգծում են Ակբա բանկի բարձր եկամտաբերությունը՝ երկուսն էլ համահունչ լինելով բանկային համակարգի միջին մակարդակին:
- ▶ **Ուժեղ կապիտալի բազա** - **Ընդհանուր կապիտալի համարժեքության գործակիցը 23.2%** է, զգալիորեն բարձր օրենսդրությամբ սահմանված նվազագույնից, ինչն ապահովում է ֆինանսական կայունություն և աճի ներուժ:
- ▶ **Ճարունակաբար բարելավվող արդյունավետություն** – **Ծախսերի և եկամուտների հարաբերակցությունը (CIR) 42.2%** է, ինչը վկայում է ծախսերի արդյունավետ կարգապահ կառավարման և գործառնական գերազանցության մասին:
- ▶ **Թվային ուղիների ընդլայնվող օգտագործում** – **Ակտիվ հաճախորդների 57%**-ը ամեն ամիս օգտվում է Ակբա բանկի թվային ուղիներից, ինչը փաստում է շարունակական առաջընթացը թվային փոխակերպման ոլորտում:
- ▶ **Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը** շարունակում է աճել՝ վկայելով կայուն շահույթի աճի և բաժնետերերի համար ավելացող արժեքի ստեղծման մասին:



ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կայուն աճի խթանում» թվային գերազանցության և հաճախորդակենտրոնության շնորհիվ»

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿԱՆ ՈՐԱԿ

Հաճախորդը մեր բոլոր գործողությունների կենտրոնում է՝ սկսած պրոդուկտի մշակումից մինչև ծառայությունների մատուցում և հարաբերությունների կառավարում

ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԳ

Մենք ներդրումներ ենք կատարում թվային հարթակներում, ավտոմատացման և արհեստական բանականության մեջ՝ ավելի արագ, ավելի խելացի և մատչելի բանկային ծառայություններ մատուցելու համար

ՊԱՏԱՍԽԱՆՏՈՒ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԲԱՆԿԻՆԳ

ԲՍԿ սկզբունքներն առաջնորդում են մեր ռիսկերի կառավարման, պրոդուկտների մշակման և շահառուների հետ ներգրավման ռազմավարությունները

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳԵՐԶԱՆՏՈՒԹՅՈՒՆ

Մենք ներդնում են կառուցվածքային, տեխնոլոգիական և գործընթացային բարելավումներ՝ արդյունավետությունը, ծախսերի վերահսկողությունը և սպասարկման որակը բարելավելու համար

ԱԿՏԻՎՏԱՏՎԱԾ ԳՈՐԾՆԹԱՅՆԵՐ

Մենք կենտրոնանում ենք գործընթացների ամբողջական օպտիմալացման և ավտոմատացման վրա՝ արագություն, կայունության և գործառնական գերազանցություն ապահովելու համար

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՐԱՆՆԵՐԸ



շուրջ 15-18%

Վարկային և ավանդային պորտֆելների տարեկան աճ



շուրջ 20%

Կապիտալի շահույթաբերություն



շուրջ 40%

Եկամուտներ/ծախսեր (Շահագործման գործակից)




շուրջ 740.000

Ակտիվ հաճախորդներ 2026թ. տարեվերջին


- ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- **2025Թ. 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ.
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**
- ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

«Ակտիվների կայուն աճ՝ պայմանավորված կապիտալի և բիզնեսի ընդլայնմամբ: Ակբան շարունակում է մնալ առաջատար 3 բանկերի շարքում»

Ակտիվներ, մլրդ ՀՀ դրամ



Պարտավորություններ և կապիտալ, մլրդ ՀՀ դրամ




- ▶ Ընդհանուր ակտիվները հասել են **1 տրիլիոն ՀՀ դրամի շեմը**, ինչը կազմում է բանկային համակարգի ակտիվների **8.3%**-ը՝ վերահաստատելով Ակբայի դիրքը ակտիվների գծով Հայաստանի առաջատար երեք բանկերի շարքում:
- ▶ Ակտիվների **14.6%** տարեկան և **8.4%** եռամսյակային աճը հիմնականում **պայմանավորված էր** համախառն վարկային պորտֆելի զգալի ընդլայնմամբ:

- ▶ Ընդհանուր կապիտալը հասել է **194.9 մլրդ ՀՀ դրամի**, ինչն արտացոլում է **6.2% աճ Նախորդ եռամսյակի համեմատ** և **19.2% աճ տարեկալից**:
- ▶ Ընդհանուր պարտավորություններն աճել են կայուն տեմպով **8.82% Նախորդ եռամսյակի համեմատ** և **13.6% տարեկալից**:

«Ուժեղ և կայուն ավանդային բազա՝ հիմնված վստահության և տեղական արժույթի կայունության վրա»

Ավանդային և թողարկված պարտատոմսերի պորտֆելն ըստ բիզնես ուղղությունների, մլրդ ՀՀ դրամ




52 մլրդ ՀՀ դրամ

Թողարկված պարտատոմսերի ծավալը 30.12.2025թ. դրությամբ

13

Գործող տրանշների քանակը (8 դրամային և 5 դոլարային)


Ավանդային և թողարկված պարտատոմսերի պորտֆելի արժույթային կառուցվածքը




31.12.2025

- ▶ Ավանդների և պարտատոմսերի պորտֆելը ցուցադրել է կայուն աճ՝ պայմանավորված մանրածախ ու կորպորատիվ ավանդների ընդլայնմամբ և հաճախորդների բարձր վստահությամբ:
- ▶ Պորտֆելը հասել է **673.8 մլրդ դրամի**, կազմելով բանկային համակարգի **ավանդների 8.6%-ը** և **աճելով 8.2% եռամսյակային կտրվածքով**՝ պահպանելով կայուն ներհոսքեր հաճախորդների բոլոր սեգմենտներում:
- ▶ Մեր պորտֆելի կայունությունը հիմնված է մեր **ավելի քան 600,000 ավանդատուների** վստահության և հավատարմության վրա:
- ▶ Պորտֆելի **71%-ը ՀՀ դրամով է**, ինչն ամրապնդում է բանկի ֆինանսավորման կայունությունը, ապահովում է կայուն աճ և հաղթահարում դոլարիզացիան:


Ընդհանուր կապիտալ, մլրդ ՀՀ դրամ



Ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվ



Զուտ շահույթ, մլրդ ՀՀ դրամ




■ ՆՐ Ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվ
 — Սահմանային մակարդակ


- ▶ 31.12.2025թ. դրությամբ Ակբա բանկի ընդհանուր կապիտալը կազմել է **194.9 մլրդ ՀՀ դրամ**, և ապահովելով **19.2% աճ տարեսկզբից** և **6.2% աճ նախորդ եռամսյակի համեմատ**, ինչը վկայում է շարունակական ամրապնդման մասին:
- ▶ Չնայած կապիտալի կայուն աճին ողջ բանկային համակարգում՝ Ակբայի **երկնիչ աճն** ընդգծում է նրա ամուր և դիմացկուն դիրքը՝ Հայաստանի առաջատար 3 բանկերի շարքում:
- ▶ **Ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը (CAR) 23.16% է՝** զգալիորեն բարձր **ԿԲ սահմանած նվազագույն 11%-ից** և բանկի սեփական պլանային նպատակից, ինչը վկայում է բարձր ֆինանսական կայունության և կապիտալի զգուշավոր կառավարման մասին:
- ▶ **Զուտ շահույթը** շարունակել է իր աճի միտումը՝ հասնելով **36.2 մլրդ դրամի**, ինչը **26%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ**, գերազանցելով եռամսյակային պլանը և ամրապնդելով Ակբայի դիրքը՝ որպես **շահույթի գծով Հայաստանի առաջատար 3 բանկերից մեկը**:

«Ակտիվների և կապիտալի բարձր շահութաբերություն, ծախսեր/եկամուտներ գործակցի շարունակական բարելավում»


Ակտիվների շահութաբերություն (ROA)



Կապիտալի շահութաբերություն (ROE)




Ծախսեր/եկամուտներ (CIR)




- ▶ **Ակտիվների շահութաբերությունը (ROA)** կազմել է **3.6%**, գերազանցելով ինչպես պլանային նպատակը, այնպես էլ բանկային համակարգի միջին **3.5%** մակարդակը՝ ընդգծելով Ակբայի ակտիվների արդյունավետ օգտագործումն ու բարձր շահութաբերությունը:
- ▶ **Կապիտալի շահութաբերությունը (ROE)** կազմել է **20.2%**, գերազանցելով պլանը, պահպանվելով համակարգային միջին **21.3%** ցուցանիշին մոտ և արտացոլելով կապիտալի արդյունավետությունն ու բաժնետերերի արժեքի շարունակական աճը:
- ▶ **Գործառնական արդյունավետությունը** շարունակել է բարելավվել **ծախսերի և եկամուտների հարաբերակցությունը (CIR)** բարելավվել է **4.4 տոկոսային կետով տարեսկզբից**, ցուցադրելով պլանային մակարդակից ավելի լավ արդյունք և վկայելով ծախսերի արդյունավետ կառավարման, բարձր արտադրողականության և կայուն եկամտաբեր մոդելի մասին:

Ակտիվ հաճախորդների քանակը




- ▶ Ակբա բանկը շարունակում է ընդլայնել իր հաճախորդային բազան. 2025թ. տարեվերջի դրությամբ ակտիվ հաճախորդների թիվը կազմել է շուրջ **690,000**. ինչը կազմում է **8% աճ տարեկապից** և **3% աճ նախորդ եռամսյակի համեմատ**:
- ▶ Ակբայի **ֆիզիկական անձ ակտիվ հաճախորդները** կազմում են հանրապետության եկամուտ ստացող աշխատատեղերի թվաքանակի **84.8%**-ը (ըստ 2025թ. դեկտեմբերի տվյալների), ինչը վկայում է բանկի լայն ընդգրկման և Հայաստանի տնտեսության հետ խոր ինտեգրման մասին:
- ▶ **Թվային ներգրավվածությունը** շարունակում է մնալ հիմնական աճի շարժիչ ուժերից մեկը. **acba digital հավելվածից օգտվող հաճախորդների բաժինը** աճել է **66%-ից (2022թ.)** մինչև **96% (2025թ. 4-րդ եռամսյակ)**:
- ▶ 2024թ. տարեվերջից հավելվածին միացել է **100,000-ից ավելի նոր օգտատեր**, ինչի արդյունքում **ամսական ակտիվ օգտատերերի թիվը հասել է 390,000-ի՝ ապահովելով 44% աճ տարեկապից** և կազմելով ակտիվ հաճախորդների **57%-ը**:

Քարտերի քանակը



Գործարքների ուղիները




- ▶ Քարտերի օգտագործումը շարունակում է աճել. թողարկված քարտերի քանակը գերազանցել է **920,000**-ը, ինչը նշանակում է **18% աճ տարեկա** քանակի և **4% աճ նախորդ եռամսյակի համեմատ**։
- ▶ **American Express քարտերը**, որոնք Հայաստանում թողարկվում են բացառապես Ակբա բանկի կողմից, կազմում են ընդհանուր քարտերի **17.1%**-ը, ապահովելով **39% աճ տարեկա** քանակի և **6% աճ նախորդ եռամսյակի համեմատ**։
- ▶ Ակբան պահպանել է իր **#1 դիրքը քարտերի թողարկման և գործարքների ծավալով**։ Քարտերի մոտ **60% պատվերները պատվիրվել են թվային եղանակով**, ընդգծելով հաճախորդների անցումը ինքնապատասխան և թվային հարմարավետության միջավայրի։

- ▶ **Չնայած ընդհանուր գործարքների պարբերաբար աճող թվաքանակին, թվային ուղիները (մոբայլ և օլայն բանկինգ)** կազմում են **բոլոր գործարքների 2/3-ը (66.5%)**, տերմինալները՝ **28%**, իսկ մասնաճյուղերի միջոցով գործարքները ընդամենը **5.5%**, ինչը վկայում է հաճախորդների կողմից թվային բանկային լուծումների լայն կիրառման մասին։
- ▶ Այս տեղաշարժը հատկապես նշանակալի է գործարքների ծավալի արագ աճի ֆոնին, քանի որ Ակբայի կողմից մշակված գործարքների ընդհանուր քանակն ավելի քան կրկնապատկվել է (2.6 անգամ)՝ 20.9 միլիոնից (2022թ.) հասնելով 54.3 միլիոնի (2025թ.), ընդ որում այս աճի մեծ մասը կազմում են թվային ուղիներով իրականացվող գործարքները։



ՄԵՐ ՀԱՎԵԼՎԱԾԸ

«Լիովին թվային բանկային փորձառություն. պարզ, անվտանգ և ավելին քան բանկինգը»



ՇՈՒՋՕՐՅԱ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- ▶ Առցանց գրանցում, անվտանգ մուտք
- ▶ Փոխանցումներ և վճարումներ
- ▶ Առցանց պատվերներ, քարտերի արգելափակում և փակում

ԽՆԱՅՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ▶ Լիովին թվային ավանդների ներդրում
- ▶ Ավանդների և հաշիվների առցանց բացում և փակում

ՎԱՐԿԱՅԻՆ ԳՐՈՂՈՒԿՏՆԵՐ

- ▶ Լիովին թվային սպառողական վարկավորում
- ▶ Նախապես հաստատված վարկային սահմանաչափեր
- ▶ Վարկերի մարումներ

ՆԵՐՂՈՒՄՆԵՐ

- ▶ Առցանց ներդրումային հաշվի բացում
- ▶ Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված արժեթղթերով առևտուր
- ▶ Արժեթղթերի հաշվի կառավարում

ԱՎԵԼԻՆ ԸՆՆ ԲԱՆԿԻՆԳԸ

- ▶ Chatbot
- ▶ Ապահովագրություն - ավտոմեքենայի, ճամփորդության և այլն
- ▶ Կենսաթոշակային ինսյուրությունների և հետևել

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐ

- ▶ Նոր գլխավոր էջ՝ բարելավված վիզուալ տեսքով, անիմացիոն բովանդակությամբ և ընդհանուր հասանելի մաացրոդի ավելի հստակ դիտարկմամբ:
- ▶ Ընդլայնված քարտային ծառայություններ հավելվածի միջոցով, ներառյալ Amex Gold դեբետային քարտի պատվիրումը և օդանավակայանի fast-track վաուչերների թվային հասանելիությունը:
- ▶ Ճանապարհային օգնության հարցումները այժմ հասանելի են անմիջապես հավելվածում Amex քարտատերերի համար:
- ▶ Ընդլայնված թվային վճարումների էլեկտրոնային կրոնամակարգ, ներառյալ Նոր կոմունալ և ծառայությունների վճարումներ:
- ▶ Վարկային գծերի վրա հիմնված վճարումները հնարավոր են դարձել ընտրված էլեկտրոնային առևտրի և լոգիստիկ հարթակների համար՝ բարելավելով ճկունությունը և գործարքների շարունակականությունը:
- ▶ Բարելավված բիզնես վճարման ֆունկցիոնալություն իրավաբանական անձանց համար հավելվածի ներսում:
- ▶ Ներդրվել են պարտադիր և ուղղորդվող KYC տվյալների թարմացման հոսքեր՝ ամրապնդելով համապատասխանությունը և միաժամանակ պահպանելով գործընթացը լիովին թվային:
- ▶ Բարելավված քարտային անվտանգություն՝ քարտի համարի մասնակի թողարկման և հավելվածում սահմանաչափի ցուցադրման և կառավարման միջոցով:
- ▶ Ներդրվել է Նոր միջազգային SWIFT ISO 20022 ստանդարտը՝ բարելավելով միջառնամային վճարումների որակը, թափանցիկությունը և մաշտաբայնությունը:
- ▶ Վերանայված ծանուցումների տրամաբանություն՝ բարելավելով հիշեցումների արդիականությունը և ժամանակացույցը:
- ▶ Բարելավված օգտատիրոջ վերահսկողության գործառույթներ, ներառյալ գործարքների և քարտի սահմանաչափերի ավելի հստակ տեսանելիությունը և կառավարումը:

APP STORE: 4.2/5 (1.3K)

PLAY STORE: 4.5/5 (5K)

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄՈՒԱՅՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ - ՀԱՅԱՍՏԱՆ 2024
INTERNATIONAL FINANCE AWARDS

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿ - ՀԱՅԱՍՏԱՆ 2025
EUROMONEY

- ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- 2025թ. 4-րդ եռամսսնայ. ֆինանսական արդյունքներ
- **ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

«Կայուն մակրոտնտեսական հիմքեր՝ չափավոր աճով և վերահսկվող գնաճով»

3.08 մլն

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

9,474

ԱՄՆ դոլար

ՀՆԱ ՄԵԿ ՇՆՉԻ
ՀԱՇՎՈՎ

29,830

մլրդ. ԱՄՆ դոլար
ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՆԱ

9,2%

ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇ

5.09

մլրդ. ԱՄՆ դոլար

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՊԱՀՈՒՄՏՆԵՐ

6.5%

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ

3.3%


ԳՆԱՃԻ ՄԱԿԱՐԴԱԿ

FitchRatings


BB- ԴՐԱԿԱՆ
ԲԵՌԱՆԿԱՐՈՎ ՎԱՐԿԱՆԻՇ

Moody's


Ba3- ԿԱՅՈՒՆ
ԲԵՌԱՆԿԱՐՈՎ ՎԱՐԿԱՆԻՇ



ՀՆԱ աճ, %*



Գնաճ, %*



- ▶ 2025 թվականին Հայաստանի իրական ՀՆԱ-ն աճել է **7.2%**-ով (2024թ. 5.9%-ի համեմատ)՝ գրանցելով տարածաշրջանի լավագույն ցուցանիշներից մեկը: Աճի հիմնական շարժիչներն են եղել **շինարարությունը** (ներդրումը ՀՆԱ-ում՝ 1.5 տ.կ.) **և ֆինանսական ու ապահովագրական գործունեությունը** (1.3 տ.կ.):
- ▶ 2021-2025թթ. միջին տարեկան աճը (**CAGR**) կազմել է **7.9%** լիովին համապատասխանելով Կառավարության 7–9% թիրախային միջակայքին: 2026-ին ակնկալվում է կայունացում **5.0%–5.4%** մակարդակում, իսկ անվանական ՀՆԱ-ն կմոտենա **12 տրիլիոն դրամին**:
- ▶ Հայաստանը պահպանում է եկամտունների անհավասարության ցածր մակարդակ (**Ջինիի գործակիցը՝ 27.2**): Սա փաստում է, որ տնտեսական աճի արդյունքները բաշխվում են ավելի հավասարաչափ, քան հարևան երկրներում՝ ապահովելով սոցիալական և ֆինանսական երկարաժամկետ կայունություն:
- ▶ Մակրոտնտեսական կայունությունն ուղեկցվում է զբաղվածության ռեկորդային մակարդակով, վերահսկելի գնաճով (**3–3.5%**) և զգալի արտաքին պահուստներով, որոնք հատել են **5 մլրդ ԱՄՆ դոլարի** շեմը:

* Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կանխատեսումներ




acba

ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ


| 2025Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Բարձր ոլորտային ցուցանիշներ, որտեղ ԱԿԲԱ-ն առաջատար 3 բանկերի շարքում է»


Ոլորտի ակտիվները, (մլրդ. ՀՀ դրամ)




Ոլորտի կապիտալը (մլրդ. ՀՀ դրամ)



Ոլորտի վարկերը (մլրդ. ՀՀ դրամ)



Ոլորտի ավանդները (մլրդ. ՀՀ դրամ)



- ▶ Ընդհանուր ակտիվները հասնել են 12.8 տրլն ՀՀ դրամի՝ վկայելով, որ բանկային համակարգը Հայաստանի տնտեսական զարգացման առաջնային հենասյուներից է:
- ▶ 7.7 տրիլիոն դրամի ընդհանուր վարկերը վկայում են խորը և կարգապահ ֆինանսական ներթափանցման, իրական տնտեսության ակտիվ աջակցության մասին՝ միաժամանակ խիստ ռիսկի չափանիշների պահպանմամբ:
- ▶ Ակբան շարունակում է մնալ առաջատար 3 բանկերի շարքում բոլոր հիմնական ցուցանիշներով, ամրապնդելով իր համակարգային կարևորությունը և առաջատար դերը Հայաստանի բանկային հատվածում:

- ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- 2025թ. 4-րդ եռամսսնապ. ֆինանսական արդյունքներ
- ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
- **ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՄԵՐ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ | 2025Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Բարձր եկամուտները և բաժնետոմսերի աճող արժեքն ընդգծում են Ակբայի կայուն կատարողականը և երկարաժամկետ աճի ներուժը»

16,100 ԶԶ դրամ
4-րդ եռ. ամենաբարձր գինը
(+12.6% տարեկան)

14,350 ԶԶ դրամ
4-րդ եռ. բացման գինը
(02/10/2025)

38.8%
Շահույթի եկամտաբերություն
(Earnings Yield)
(բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ + Շուկայական արժեք, %)

0.48x
Գին/հաշվեկշռային արժեք գործակից
(Price-to-Book Ratio, P/B)
(Շուկայական արժեք / բաժնետոմսի հաշվեկշռային արժեք)


14,300 ԶԶ դրամ
4-րդ եռ. ամենացածր գինը
(+9.6% տարեկան)

15,600 ԶԶ դրամ
4-րդ եռ. փակման գինը
(29/12/2025)

2.58
Գին/Շահույթ գործակից
(Price-to-Earnings Ratio, P/E)
(Շուկայական արժեք * 1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ)

15,293 ԶԶ դրամ
4-րդ եռ. միջին գինը
(+7.2% տարեկան)

Բաժնետոմսի միջին ամսական շուկայական արժեք (ԶԶ դրամ)



- ▶ Ակբայի բաժնետոմսերի գինը 2025 թվականի 4-րդ եռամսյակի ավարտին կազմել է **15,600 դրամ**, ինչը կազմում է տարեկան **10.6% աճ** արտացոլելով Ներդրողների վստահության աճը:
- ▶ Պահպանելով կայուն աճի միտում՝ Բանկի բաժնետոմսերի միջին եռամսյակային գինը կազմել է **15,293 ԶԶ դրամ**: Հատկանշական է, որ 2025թ. հոկտեմբերի վերջից ի վեր բաժնետոմսի շուկայական արժեքը կազմել է 15,000 ԶԶ դրամից ավելի, ինչը վկայում է Ներդրողների հետաքրքրվածության աճի մասին:
- ▶ Շուկայի ներկայիս մակարդակը ռազմավարական ներդրողներին ընձեռում է բարենպաստ մուտքի հնարավորություն, որը բնութագրվում է բաժնետոմսի արժեքի հստակ ներքին մակարդակով և զգալի աճի ներուժով: Բաժնետոմսերի գործող արժեքները դեռևս լիովին չեն արտացոլում Բանկի հիմնական եկամտաբերությունը կամ ակտիվների բազայի հիմքում ընկած ուժը՝ վկայելով բաժնետոմսերի զգալի թերագնահատվածության և աճի պոտենցիալի մասին:




«Մեկ բաժնետոմսի մեկ բաժնետոմսի եկամտաբերության և հաշվեկշռային արժեքի աճն արտացոլում է կապիտալի աճի ուժեղ ներուժը»

32,572 ՀՀ դրամ (+19% տարեկան)

1 բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 31.12.2025թ. դրությամբ


Հաշվեկշռային արժեքի դինամիկան, (ՀՀ դրամ)



6,055 ՀՀ դրամ (+17% տարեկան)


1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը 31.12.2025թ. դրությամբ

1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի դինամիկան, (ՀՀ դրամ)



- ▶ Կերջին չորս տարիների ընթացքում Բանկը գրեթե կրկնապատկել է մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը՝ շնորհիվ կայուն շահութաբերության և կապիտալի հաջողական ավելացումների:
- ▶ Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը կառուցվածքային աճի միտում է ունեցել՝ 2025 ֆինանսական տարում հասնելով 6,055 ՀՀ դրամի և վկայում են շահույթի շարունակական կայունության մասին:
- ▶ Ակբա բանկի բաժնետոմսերը շարունակել են ամրապնդել շուկայական վստահությունը՝ աջակցվելով բարելավված իրացվելիության և կայուն գների աճի շնորհիվ, մինչդեռ դեռևս վաճառվում են հաշվեկշռային արժեքից էականորեն ցածր:
- ▶ Շահութաբաժինները մնում են բաժնետերերի եկամտաբերության հիմնական մեխանիզմը՝ արտացոլելով Բանկի հանձնառությունը գործող իրավական սահմանափակումների պայմաններում կանխատեսելի և կայուն կապիտալի եկամտաբերության նկատմամբ:
- ▶ Միջևաժամկետ հեռանկարում բաժնետերերի ընդհանուր եկամտաբերությունը, ինչպես կանխատեսվում է, կորոշվի դիվիդենտների և բաժնետոմսերի գնորոշման աստիճանական Նորմալացման համադրությամբ՝ թափանցիկության, իրացվելիության և Ներդրողների ըմբռնման խորացմանը զուգընթաց:


Ակբա բանկի բաժնետոմսերով գործարքների ծավալները Ֆոնդային բորսայում մլրդ ՀՀ դրամ



- ▶ 2022 թվականի փետրվարին ցուցակվելուց ի վեր, Ակբա բանկը դարձել է Հայաստանի ֆոնդային բորսայի անկլոնաքարը՝ մշտապես ապահովելով բաժնետոմսերի ընդհանուր առևտրի ծավալի զգալի մասը: Համակարգային կարևորությունն արտացոլվում է նաև այն փաստով, որ Ակբա բանկի շուկայական կշիռը կազմում է բաժնետոմսերի շուկայի ընդհանուր կապիտալիզացիայի 22%-ը:
- ▶ Վերջին 4 տարիների ընթացքում շուկայական ընդհանուր ակտիվությունն աճել է գրեթե 8 անգամ (1,183 մլրդ-ից մինչև 9,385 մլրդ դրամ շրջանառություն), որտեղ Ակբայի բաժնետոմսերով կատարվող գործարքները կազմում են շուրջ 41%-ը: Դա արտացոլում է ներդրողների խորը վստահությունը և Ակբա բանկի կառուցվածքային կարևորությունը Հայաստանի ֆինանսական էկոհամակարգում:
- ▶ 2025թ. 4-րդ եռամսյակում **Ակբայի բաժնետոմսերի միջին օրական առևտրային ծավալը կազմել է 367 բաժնետոմս**, ինչը **200%-ով ավելի է նախորդ տարվա նույն ցուցանիշից**, վկայելով շուկայի **աճող ակտիվության և ներդրողների հետաքրքրության մասին**:

Շահույթի բաշխում, մլրդ. ՀՀ դրամ

Վճարման գործակից



Նվազագույնը 20%

Շահութաբաժինների վճարման նվազագույն գործակից համաձայն շահութաբաժնային քաղաքականության


2024 թվականի շահութաբաժիններ

1,100 ՀՀ դրամ (+10% տարեկան)
Շահութաբաժին 1 բաժնետոմսի դիմաց

Շուրջ 22%

Վերջին տարիներին վճարված շահութաբաժինների տարեկան միջին համակցված աճի տեմպ (CAGR)

Տեղաբաշխված բաժնետոմսեր, հազար հատ



- ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- 2025թ. 4-րդ եռամսսնայ. ֆինանսական արդյունքներ
- ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- **ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ**
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

“Շարունակական կենտրոնացում կառավարման, մարդկանց և համայնքային ազդեցության վրա”

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՄԱԴԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

- ▶ Նշվեց **Ակբայի** և **Պրոպարկոյի** ռազմավարական գործընկերության մեկ տարին, որն ամրապնդեց միջազգային բաժնետերերի վստահությունը և Բանկի կառավարման շրջանակը:
- ▶ Ներդրվեց խմբի մակարդակով կառավարման կառուցվածք, որի շրջանակներում **Ակբա բանկի խորհրդի** անդամները նշանակվեցին նաև **Ակբա լիզինգի խորհրդում**:
- ▶ **Ամրապնդվեց համապատասխանության և էթիկայի շրջանակը**. ընդունվեցին նոր էթիկայի կանոնագիրք, վարքագծի կանոնագիրք և ազդարարման քաղաքականություն, այդ թվում՝ **Whispli**-ի կողմից գործարկվող Հայաստանի առաջին անկախ ազդարարման հարթակը:
- ▶ Ակբան հաջողությամբ տեղաբաշխեց **դրամային և ԱՄՆ դոլարային պարտատոմսեր (10 միլիարդ ՀՀ դրամ և 10 միլիոն ԱՄՆ դոլար)**: ՀՀ դրամային պարտատոմսերը ցուցակվեցին **ՀՀ ֆոնդային բորսայում**:

ՄԱԿՐՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

- ▶ Միջազգային ֆինանսական հաստատություններից Ակբան ներգրավվեց մոտ **55 միլիոն ԱՄՆ դոլարի** ֆինանսավորում, հիմնականում ՀՀ դրամով, **ՓՄՁ-ներին, գյուղատնտեսությանը և երիտասարդ ձեռնարկատերերին աջակցելու համար**:
- ▶ Ակբան շարունակել է առաջատար դիրքեր ունենալ թվային բանկային գործունեության և ESG ոլորտում՝ Euromoney-ի կողմից ճանաչվելով **«Լավագույն ESG բանկ»** և **«Լավագույն թվային բանկ Հայաստանում»** անվանակարգերում:
- ▶ Ներդրել է **SWIFT ISO 20022** ստանդարտը միջազգային փոխանցումների համար՝ ամրապնդելով միջսահմանային վճարային ենթակառուցվածքները:
- ▶ Մենք հյուրընկալեցինք և մասնակցեցինք ՎՁԵԲ-ի և մյուս գործընկերների հետ բարձր մակարդակի ըննարկումներին՝ **կլիմայական ռիսկերի և գյուղատնտեսության մեջ հարմարվողականության վերաբերյալ**:

- ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- 2025թ. 4-րդ եռամսսն ապ. ֆինանսական արդյունքներ
- ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- **ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

ԱԿՏԻՎՆԵՐ	31/12/2025 (չստուգված)	31/12/2024 (ստուգված)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	99,170,819	106,030,069
Պահանջներ բանկերի նկատմամբ	98,248,127	81,482,428
Ներդրումային արժեթղթեր	73,247,135	62,108,609
Հաճախորդներին տրված վարկեր	633,803,003	536,210,032
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	103,041,353	93,105,821
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	2,588,014	2,044,092
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	31,929,561	29,114,084
Այլ ակտիվներ	25,639,299	21,443,834
Ընդամենը ակտիվներ	1,067,703,307	931,697,149
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Բանկերի ավանդներ և մնացորդներ	2,007,915	462,797
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	622,061,677	584,122,036
Թողարկված պարտքային արժեթղթեր	51,798,299	39,408,576
Այլ փոխառություններ	157,877,342	110,883,860
Այլ պարտավորություններ	19,876,758	16,927,858
Ստորադաս վարկեր	13,152,984	12,632,502
Ընդամենը պարտավորություններ	872,759,323	768,256,770
ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	89,775,000	89,775,000
Էմիսիոն եկամուտ	3,811,978	3,811,978
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ	3,517,422	3,517,422
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	5,277,052	3,757,943
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	579,047	304,799
Չբաշխված շահույթ	78,517,235	48,806,987
Ընդամենը կապիտալ	194,943,984	163,440,379
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	1,067,703,307	931,697,149



հազար ՀՀ դրամ

Հազ. ՀՀ դրամ	31/12/2025 (չստուգված)	31/12/2024 (ստուգված)
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	92,879,921	79,644,047
Այլ տոկոսային եկամուտ	14,135,021	12,524,767
Տոկոսային ծախս	(40,655,604)	(37,604,761)
Զուտ տոկոսային եկամուտ	66,353,338	54,564,053
Վարկային կորուստների գծով ծախսի հակադարձում/ (ծախս)	(3,964,546)	(2,350,038)
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո	62,394,792	52,214,015
Միջնորդավճարների գծով եկամուտ	18,711,467	14,706,808
Միջնորդավճարների գծով ծախս	(9,164,996)	(6,599,484)
Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	(319,309)	581,991
Զուտ օգուտ արտարժույթի առքուվաճառքից	6,484,444	4,995,441
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	657,401	58,725
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	1,653,350	1,211,887
(Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով հակադարձում	(49,248)	(88,096)
Այլ եկամուտ	830,785	837,153
Ոչ տոկոսային եկամուտ	18,803,894	15,704,425
Անձնակազմի գծով ծախսեր	(23,142,847)	(21,022,475)
Մաշվածություն և ամորտիզացիա	(3,915,944)	(3,828,836)
Այլ գործառնական ծախսեր	(3,154,227)	(2,562,445)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(5,761,528)	(5,360,949)
Ոչ տոկոսային ծախս	(35,974,546)	(32,774,705)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	45,224,140	35,143,735
Շահութահարկի գծով ծախս	(8,983,777)	(6,378,646)
Հաշվետու տարվա շահույթ	36,240,363	28,765,089



ՊԱՏԱՄԻԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՅՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Սույն ներկայացումը նախատեսված է բացառապես «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի (նաև՝ «Ակբա» կամ «Բանկ») առկա և պոտենցիալ բաժնետերերի, վերլուծաբանների և այլ շահառուների համար ընդհանուր տեղեկատվական նպատակներով, և չպետք է դիտարկվի որպես որևէ հրավեր, առաջարկություն կամ առաջարկ վաճառելու որևէ արժեթղթի կամ որևէ ներդրումային որոշում կայացնել Բանկի արժեթղթերի հետ կապված որևէ գործարք կնքելու համար: Ակբան որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում այս ներկայացման բովանդակության հիման վրա կայացված որևէ որոշման համար:

Ներկայացումը ներառում է ապագային ուղղված հայտարարություններ, որոնք արտացոլում են ապագա իրադարձությունների, ֆինանսական միտումների և կատարողականի վերաբերյալ ներկայիս սպասումներն ու կանխատեսումները: Նման ապագային ուղղված հայտարարությունները պարունակում են հայտնի և անհայտ ռիսկեր, անորոշություններ և այլ գործոններ: Այս հայտարարությունները հիմնված են Բանկի ներկա և ապագա ռազմավարությունների, ինչպես նաև ապագայում գործելու միջավայրի վերաբերյալ բազմաթիվ ենթադրությունների և գնահատականների վրա: Նման ենթադրություններն ու գնահատականները ներառում են ռիսկեր և անորոշություններ, որոնցից շատերը գտնվում են Ակբայի վերահսկողությունից դուրս: Իրական արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսվածներից կամ ենթադրյալներից: Այս փաստաթղթում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես շահույթի կանխատեսում: Վարկերի և ավանդների եռամսյակային աճը հաշվարկելու համար՝ առանց արժույթի փոխարժեքի ազդեցության, մենք օգտագործել ենք համապատասխան փոխարժեքները 2025 թվականի դեկտեմ-

բերի 31-ի դրությամբ: Տարեկան աճը հաշվարկելու համար՝ առանց արժույթի փոխարժեքի ազդեցության, մենք օգտագործել ենք համապատասխան փոխարժեքները 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ներկայացումը կարող է պարունակել տվյալներ և վերլուծություններ, որոնք ստացվել են հրապարակային հասանելի աղբյուրներից, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշները և բանկային ոլորտի վիճակագրությունը՝ ներկայացման օրվա դրությամբ, և կարող են փոփոխվել առանց նախնական ծանուցման: Ակբան հիմնվում է հուսալի համարվող աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա, բայց չի երաշխավորում դրանց ճշգրտությունը կամ ամբողջականությունը: Ակբան որևէ պարտավորություն չի ստանձնում թարմացնելու կամ վերանայելու այս ներկայացումը կամ այստեղ պարունակվող ապագային ուղղված հայտարարությունները՝ նոր տեղեկատվության, ապագա իրադարձությունների կամ այլ պատճառներով, բացառությամբ օրենքով պահանջվող դեպքերի:

Այս ներկայացման մեջ պարունակվող որոշակի ֆինանսական տեղեկատվություն վերցված է Բանկի՝ առանց արտաքին աուդիտի եզրակացության կառավարչական հաշիվներից և ֆինանսական հաշվետվություններից: Այն ոլորտները, որոնցում կառավարչական հաշիվները կարող են տարբերվել IFRS ստանդարտներից, կարող են նշանակալի լինել: Ներկայացման մեջ ներառված որոշ թվային միավորներ ենթարկվել են կլորացման և ճշգրտումների: Յետևաբար, որոշակի աղյուսակներում որպես ընդհանուր թվեր ներկայացված թվային միավորները կարող են չհամարվել դրանց նախորդող թվերի թվաբանական ամփոփում:



«Կայուն աճ, բարձր շահութաբերություն, ուժեղ կառավարում:
Ակրա բանկը լավ դիրքավորված է՝ այսօր արժեք ստեղծելու և
ապագայի համար ավելի մեծ հնարավորություններ կառուցելու
համար»

Գրանցման հասցե՝

ՀՀ, ք. Երևան, 0002, Արամի փ. 82-84

Կոնտակտային տվյալներ

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

Ներդրողների հետ հարաբերությունների բաժին

Հեռ.՝ +374 10 318888 (8129); +374 94 700 681

Էլ. փոստ՝ ir@acba.am

www.acba.am